

ՊՐԿԱԽՏԻ ԵՒ ԴԻՖՏԵՐԻԱՅԻ ՊԱՏՎԱՍՏ

(Td)

Ի՞նչ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԼ ՆԱԽՔԱՆ ԴՈՒՔ ԿԱՄ ՁԵՐ ԵՐԵԽԱՆ ՊԱՏՎԱՍՏ ԸՆԴՈՒՆԵԼԸ



ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Պրկախտը (Կզակախտաբույժություն) եւ Դիֆտերիան լուրջ հիվանդություններ են: Պրկախտը առաջանում է, երբ մանրէները մարմին են մուտք գործում

Ճեղքվածքի կամ վերքի միջոցով: Դիֆտերիան տարածվում է, երբ մանրէները վարակված անձից փոխանցվում են ուրիշներին՝ քթի կամ կոկորդի միջոցով:

<p>Պրկախտի հետեւանքով՝ անհատը ենթարկվում է մկանային ցավերի եւ պրկումների</p>	<p>Դիֆտերիայի հետեւանքով՝ Քթի, կոկորդի կամ օդային անցքերու մեջ ստեղծվում է թաղանթանման պատ</p>
<p>Պրկախտը առաջնորդում է. - (կզակախտաբույժան), որի պատճառով չի կարողանում բացել բերանը եւ կամ կոպ տալ - մահվան</p>	<p>Դիֆտերիան առաջնորդում է. - շնչառական բարդությունների - սրտի տկարության - անդամալուծության - մահվան</p>

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՎԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Պատվաստների օգուտները

Պրկախտի եւ Դիֆտերիայի դեմ պաշտպանվելու լավագույն միջոցը պատվաստումն է: Շնորհիվ պատվաստումի, այս հիվանդություններով տառապողների թիվը քիչ է: Երեխաների մոտ նույնպես քիչ դեպքեր են գրանցվում, որովհետեւ նրանցից շատերը ընդունում են DTP (Դիֆտերիա, Պրկախտ ու Կապույտ Հազ), DTaP (Դիֆտերիա, Պրկախտ եւ Ոչ-բջջային Կապույտ Հազ) կամ DT (Դիֆտերիա եւ Պրկախտ) պատվաստները: Շատ ավելի դեպքեր կարող էին գրանցվել այսօր, եթե պատվաստումները դադարեցվեյին:

Ե՞րբ պետք է ընդունել Td պատվաստը

Td-ն 7 տարեկան ու ավելի մեծ տարիքով երեխաներին է տրվում:

Այն անձերը, որոնք իրենց կյանքի ընթացքում չեն ընդունել գոնե 3 դեղաչափ այս պատվաստից (DTP, DTaP, DT), պետք է օգտվեն Td-ից: Երրորդ դեղաչափը ընդունելուց հետո Td պատվաստը անհրաժեշտ է ընդունել միայն 10 տարին մեկ:

Կարելի է նաեւ Td պատվաստի հետ համատեղ ընդունել

տարբեր պատվաստումներ:

Հայտնեցեք ձեր բժիշկին, եթե պատվաստվող անհատը.

- երբեւէ ունեցել է գերզգայնական հակազդեցություն կամ տարբեր բարդություն Td-ով պատվաստվելիս, ինչպես նաեւ Պրկախտի եւ Դիֆտերիայի պատվաստների ընդունելիս (DTP, DTaP կամ DT):
- ներկայումս տառապում է թեթեւ կամ լուրջ հիվանդությունով
- հղի է

Վստահ չլինելու դեպքում խորհրդակցեք ձեր բժիշկի հետ:

Ի՞նչ են Td պատվաստի վտանգները

Ինչպես որեւէ դեղամիջոց ընդունելու դեպքում, այնպես էլ պատվաստումներից առաջացող վտանգները չնչին են եւ լուրջ բարդություններ կամ նույնիսկ մահվան առաջնորդելու վտանգ չի սպառնում:

Պատվաստումների հետեւանքով առաջացած բարդությունները շատ անելի մեղմ են քան այն բարդությունները, որոնք առաջանում են պատվաստները չընդունելու որպէս արդյունք:

Գրեթե բոլոր նրանք, որոնք ընդունել են Td պատվաստը, երբեք բարդություններ չեն ցուցաբերել:



U.S. DEPARTMENT OF HEALTH & HUMAN SERVICES
Public Health Service
Centers for Disease Control
and Prevention

Թեթև բարդություններ

Եթե այսպիսի բարդություններ առաջանան, ապա նրանք կսկսվեն պատվաստումից հետո առաջին մի քանի ժամից մինչև 1 կամ 2 օր եւ կարող են տեսել 1 կամ 2 օր.

- նկատվում է կարմրություն, ուռեցք եւ ցավ՝ պատվաստի վայրում

Այս բարդությունները ավելի վատ ձեւով են հանդես գալիս մեծահասակների մոտ, որոնք հաճախ ընդունում են Td պատվաստը:

Ցավը մեղմելու համար կարելի է գործածել Ասեթամֆինոֆեն կամ Իբոպրոֆեն (ոչ-Ասպիրինային):

Մութ բարդություններ

Այս բարդությունները լինում են շատ սակավ.

- ունենում են լուրջ գերզգայնական հակազդեցություն
- բազուկներում զգացվում է խորը մկանային ցավեր, որոնք կարող են առաջանալ 2 օրից մինչև 4 շաբաթվա ընթացքում եւ կարող են տեսել ամիսներ:



Ի՞նչ անել լուրջ հակազդեցության դեպքում.

- ☞ Հեռաձայնել բժիշկին կամ հիվանդին շոտափույթ տանել բժիշկի մոտ
- ☞ Գրանցել եղելության ընթացքը, թվականն ու ժամանակը
- ☞ Պահանջել բժիշկից կամ առողջապահական բաժնից լրացնելու Vaccine Adverse Event Report-ի (Պատվաստի Վնասակար Հետեւանքների Տեղեկագիր) ձեւը կամ հեռաձայնել այս համարով՝

(800) 822-7967 (անվճար)

Վնասների Հատուցման Պետական Մրագիրը (National Vaccine Injury Compensation Program) հատուցում (վճարում) է կատարում այն անհատներին, որոնք ենթարկվում են թե, վնասվել են պատվաստումներից: Մանրամասնությունների համար հեռաձայնել այս համարով՝

(800) 338-2382 (անվճար)

Հավելյալ տեղեկությունների համար խորհրդակցեք ձեր բժիշկի հետ: Նա ձեզ կտա պատվաստումների մասին տեղեկատվական գրքուկ կամ ներդիր, կամ կհանձնանարի տեղեկության այլ աղբյուրներ: